

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

«Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

30.11.2013թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 56 անդամներից ներկա էին 41-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Պատմաբանասիրական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա հաշվետվություն:
Ձեկ.՝ պատմաբանասիրական ֆակուլտետի
ղեկան Ս. Հայրապետյան
2. Օտար լեզուների ֆակուլտետի 2012-2013 ուստարվա հաշվետվություն:
Ձեկ.՝ օտար լեզուների ֆակուլտետի ղեկան Թ. Մելիքյան
3. Ֆիզիկական դաստիարակության և նախնական գինվորական
պատրաստականության ֆակուլտետի 2012-2013 ուստարվա հաշվետվություն:
Ձեկ.՝ ֆիզ. դաստ. և ՆԶՊ ֆակուլտետի ղեկան Ա. Մաթևոսյան
4. Ընթացիկ հարց:
4.1. ԳՊՄԻ-ի «Գիտական տեղեկագիր» հանդեսի 2013 թ. երկրորդ համարի Ա և Բ
պրակները հրատարակության երաշխավորելու մասին:
Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

Ռեկտոր Վ. Ֆ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 41 անդամներ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. **ԼՍԵՑԻՆ.**- Պատմաբանասիրական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա հաշվետվությունը (**Ձեկ.**՝ պատմաբանասիրական ֆակուլտետի ղեկան Ս. Հայրապետյան):
- Ս. Հայրապետյանի ներկայացմամբ՝ ԳՊՄԻ-ի պատմաբանասիրական ֆակուլտետը հաշվետու 2012-2013 ուստարում 3 մասնագիտական ամբիոններով իրականացրել է բակալավրի առկա 4, հեռակա 5 և

մագիստրոսի 3 մասնագիտական կրթական ծրագրեր, նաև՝ երրորդ աստիճանի՝ հետազոտողի կրթական ծրագիր:

Նա խոսեց առկա և հեռակա ուսուցմամբ ֆակուլտետի մասնագիտությունների և մասնագիտացումների մասին, որոնց միակ տարբերությունը եղել է հեռակա ուսուցման համակարգում գրադարանային գործ մասնագիտության առկայությունը, որը, սակայն, փակվել է 2012-2013 ուստարում:

2012-2013 ուստարում ֆակուլտետում առկա/հեռակա բակալավրի կրթական և մագիստրոսական ծրագրով սովորել է 661 ուսանող, իսկ հետազոտական ծրագրով՝ 7 հայցորդ:

Խոսելով տարբեր մասնագիտությունների գծով ուսանողների բաշխվածության մասին /ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգերում/՝ դեկանը հատկապես շեշտադրեց լրագրություն մասնագիտության գծով 2012-2013 ուստարում ուսանողների փոքր թիվը (բակալավրիատի առկա ուսուցման համակարգում՝ 15, հեռակա ուսուցման համակարգում՝ 12): Նա ենթադրեց, որ հիմնական պատճառներից մեկը տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝ ՀԿ-ների, կարճատև դասընթացներն են, որոնց օգնությամբ պատրաստում են լրագրողների կամ, ավելի շուտ, «լուր հավաքողների»:

Այնուհետև պրն. Հայրապետյանն անցկացրեց առկա ու հեռակա ուսուցմամբ 2012-2013 ուստարվա ընդունելության անցողիկ միավորների, ինչպես նաև ֆակուլտետի առկա ու հեռակա ուսուցմամբ տարբեր կիսամյակների կտրվածքով ուսանողների բացարձակ առաջադիմության համեմատություն: Առկա ուսուցմամբ բակալավրի 2012-2013 ուստարվա I կիսամյակի բացարձակ առաջադիմությունը կազմել է 47%, իսկ II կիսամյակի նույն ցուցանիշը 50% է: Մագիստրոսական կրթական համակարգում 2012-2013 ուստարվա I կիսամյակի բացարձակ առաջադիմությունը կազմել է 77, 5%, իսկ II կիսամյակում՝ 84%: Այստեղ նկատելի է դրական տեղաշարժ: Հեռակա ուսուցման համակարգի հաշվետու ժամանակաշրջանի I կիսամյակի

բացարձակ առաջադիմությունը կազմել է 32,5%, իսկ II կլիսամյակի նույն ցուցանիշը 35% է: Երկրորդ տվյալի դեպքում ևս կա աննշան աճ:

2012-2013 ուստարում ատեստավորում են անցել ֆակուլտետի առկա/հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի 214 շրջանավարտներ, որոնցից 7-ն արժանացել է գերազանցության դիպլոմի:

Բացի այդ, խոսվեց ֆակուլտետի աշխատակիցների գիտական աստիճանների, կոչումների, հաշվետու տարում նրանց կողմից ծավալած գիտական գործունեության, նվաճումների և հայցորդների աշխատանքային գործունեության մասին:

Ինչ վերաբերվում է ֆակուլտետի ռեսուրսներին, ապա մասնավորապես անհրաժեշտ են նոր համակարգիչներ և կահույք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը,

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

Ա. Ֆարմանյանը ուշադրություն էր դարձրել, մասնավորապես, հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ առկա ու հեռակա ուսուցման մուտքերի պայմաններին: Նշված մասնագիտությամբ առկա ուսուցման դիմորդների՝ 1 առարկայի համար միջին միավոր է եղել 9,4-ը, իսկ հեռակա ուսուցման դիմորդների՝ 1 առարկայի համար՝ 10,5-ը: Ավելին, համեմատելով բացարձակ առաջադիմությունը, պարզ է դարձել, որ բակալավրիատի առկա ուսուցմամբ հայոց լեզու և գրականություն մասնագիտության գծով IV կուրսի ուսանողների II կլիսամյակի բացարձակ առաջադիմությունը 25 % է, իսկ բակալավրիատի նույն մասնագիտության հեռակա ուսուցման ուսանողների II կլիսամյակի բացարձակ առաջադիմությունը՝ 17 %: Հարցը վերաբերում էր նշված թվային տվյալների բացատրմանը:

Հարցին ի պատասխան Ս. Հայրապետյանը նկատեց, որ այդ խնդիրն առկա է բոլոր ֆակուլտետներում: Հավանաբար պատճառը հեռակայի

ընդունելության ժամանակ դիմորդների հանդեպ առավել մեղմ, զիջողական վերաբերմունքի ցուցաբերումն է:

Վ. Գրիգորյանը նշեց, որ լրագրություն մասնագիտությամբ դիմորդների թիվն, իրոք, փոքր է, և այդ ուղղությամբ կան անելիքներ:

Ինչ վերաբերվում է ֆակուլտետի համակարգիչների և կահույքի նորացմանը, ապա դա լուծելի խնդիր է և առաջիկայում կյանքի կկոչվի:

Ս. Ալեքսանյանը կարևորեց Ս. Հայրապետյանի կատարած վերլուծությունը, որը վերաբերում է բոլոր ուղղություններով ֆակուլտետի ծավալած գործունեությանը: Ըստ նրա՝ բարձրացվել են կարևոր հարցեր (լսարանների, ռեսուրսների բարելավման ուղղությամբ և այլն): Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը նաև կարևորեց բուհի հասարակական պատասխանատվության ներքո բուհ-դպրոց, բուհ-ֆակուլտետ, բուհ-կրթության վարչություն փոխհարաբերությունների հաստատումը՝ ուղղված ինստիտուտի դիմորդների թվի ավելացմանը: Ս. Ալեքսանյանը, գնահատելով ֆակուլտետի դեկանի հետևողական աշխատանքը, պարտաճանաչությունը և բարեխղճությունը, առաջարկեց դեկանի 1 տարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Պատմաբանասիրական ֆակուլտետի դեկանի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 41 անդամներ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.-

Օտար լեզուների ֆակուլտետի 2012-2013 ուստարվա հաշվետվությունը (Ձեկ.՝ օտար լեզուների ֆակուլտետի դեկան Թ. Մելիքյան):

Թ. Մելիքյանը ներկայացրեց ֆակուլտետի 2012-2013 ուստարվա հաշվետվությունը՝ շեշտադրելով հատկապես ներքոհիշյալ հարցերը.

- ֆակուլտետի կառուցվածքային միավորները, դրանց կազմը (որակական և քանակական տեսանկյունից),
- պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ծավալած գիտական գործունեությունը (հրատարակված գիտական (գիտամեթոդական)

և ուսումնամեթոդական աշխատանքների մասին (որակական և քանակական տեսանկյունից),

- ֆակուլտետի որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքները,
- առկա և հեռակա ուսուցմամբ ֆակուլտետի մասնագիտությունները և մասնագիտացումները,
- ֆակուլտետի առկա/հեռակա բակալավրի կրթական և մագիստրոսական ծրագրով սովորողների թիվը, ուսանողների բաշխվածությունն ըստ տարբեր մասնագիտությունների,
- ֆակուլտետի ծավալած քաղաքականությունը՝ միտված գիտական աստիճան, կոչում ունեցող կադրերի թվաքանակի ավելացմանը,
- առկա և ցանկալի ռեսուրսների (նյութատեխնիկական) մասին, որոնք կիրառվեն ուսանողների գիտելիքների մակարդակի բարձրացմանը, նոր հմտությունների ու կարողությունների ձևավորմանը և այլն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը:

Ա. Ֆարմանյանին հետաքրքրում էր, թե ինչո՞ւ անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության գծով մուտքի պայմանները առկա համակարգում 18 է, մինչդեռ ելքի պայմանները՝ ցածր: Հեռակա ուսուցման համակարգում ուսանողն ընդունվում է 8-երով, մինչդեռ ավարտում գերազանց առաջադիմությամբ: Հարցը վերաբերում էր 3 ուսանողների մուտքի և ելքի պայմանների տարբերության պատճառների պարզաբանմանը:

Թ. Մելիքյանը նկատեց, որ դասախոսները հաճախ խիստ մոտեցում են ցուցաբերում ուսանողների պատասխանի հանդեպ՝

Այդ հարցին պատասխանեց նաև Ա. Հովհաննիսյանը, նշելով, որ հաճախ են հանդիպում ուսանողներ, ովքեր անգիր են տիրապետում շտեմարանների հարցերին և նման տարբերակով ապահովում բարձր միավորներ ընդունելության ժամանակ: Մինչդեռ ուսումնառության տարիներին, ըստ իր խորին համոզման, անգիր արված դասախոսության համար չի կարելի նշանակել գերազանց գնահատական, այլ պետք է բարձր նշանակել տրամաբանող, վերլուծող ուսանողին: Ավելին, հեռակա ուսուցման համակարգում ևս կան սովորողներ, ովքեր ցուցաբերում են բարձր առաջադիմություն: Մագիստրատուրայում իրենք ունեն ուսանող, ով բակալավրիատում սովորել է հեռակա ուսուցման համակարգում և հավելեց, որ 3 ուսանողը էական տոկոս չի կազմում և չի կարելի ցուցանիշն ընդհանրացնել ամբողջ կուրսի համար:

Ս. Սարգսյանը հիշեցրեց, որ ուսանողների գնահատման ու բողոքարկման կարգի դրույթների իմացությունը հարկ եղած դեպքում թույլ կտա ուսանողին՝ պաշտպանել սեփական իրավունքը:

Ս. Ալեքսանյանի համոզմամբ՝ Թ. Մելիքյանի վերլուծությունը բացահայտում է օտար լեզուների ֆակուլտետի ուժեղ ու թույլ կողմերը: Առաջադիմության ցուցանիշները վկայում են այն մասին, որ պետք է մտածել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Գովելի է ֆակուլտետում լինգվաֆոնային լսարանի առկայությունը, որն անառարկելիորեն նպաստում է անգլերենի արդյունավետ ուսուցմանը: Ըստ նրա՝ մտահոգիչ է գերմաներենի գծով մասնագետների պակասը:

Իր խոսքի վերջում պրն. Ալեքսանյանն առաջարկեց Թ. Մելիքյանի կարճ ժամանակահատվածում կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Վ. Գրիգորյանը նկատեց, որ հատկապես լուրջ անելիքներ կան ֆրանսերեն, գերմաներեն լեզուների ուղղությամբ: Անհրաժեշտ են նոր մոտեցումներ՝ ուղղված այդ մասնագիտությունների գծով դիմորդների հետաքրքրվածության աճին: Օտար լեզուների հանդեպ

հետաքրքրությունը չի պակասել դպրոցականների շրջանում: Այդ մասին է վկայում այս տարվա ԳՊՄԻ-ի օլիմպիադայում գովասանագիր ստացած դպրոցականների թիվը (80): Նա խնդրեց, որ ֆակուլտետի ղեկանը, ամբիոնների վարիչները բարձրաձայնեն, թե կոնկրետ ինչպիսի ռեսուրսներ են անհրաժեշտ, որոնց կիրառման միջոցով կբարձրանա ֆակուլտետի աշխատանքային գործունեության արդյունավետությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Օտար լեզուների ֆակուլտետի ղեկանի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 41 անդամներ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ.-

Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի 2012-2013 ուստարվա հաշվետվությունը (Ձեկ.՝ ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի ղեկան Ա. Մաթևոսյան):

Ա. Մաթևոսյանը խոսեց ֆակուլտետին վերաբերող հետևյալ հարցերի շուրջ.

- ուսումնական բարեփոխումների կազմակերպչական աշխատանքներին ակտիվ մասնակցությունը,
- 2012-2013 ուստարում առկա և հեռակա ուսուցմամբ մասնագիտությունների և մասնագիտացումների մասին,
- 2012-2013 ուստարում առկա/հեռակա բակալավրի կրթական և մագիստրոսական ծրագրով սովորողների թվաքանակի, տարբեր մասնագիտությունների գծով նրանց բաշխվածության մասին,
- 2012-2013 ուստարում բակալավրի առկա/հեռակա և մագիստրոսական ծրագրով տարբեր մասնագիտությունների և կուրսերի կտրվածքով ուսանողների բացարձակ առաջադիմության մասին,
- հաշվետու շրջանում ֆակուլտետի ուսանողների մարզական նվաճումների մասին,

- պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աստիճանների, կոչումների ներկայացվածության և նոր կադրերի պատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին,
- ֆակուլտետի հայաստանյան և արտասահմանյան բուհերի հետ համագործակցության եզրերի ընդլայնմանն ուղղված նախագծերի մշակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

Ս. Ալեքսանյանը կարևորեց Ա. Մաթևոսյանի ներկայացումը՝ օբյեկտիվորեն արտացոլող ֆակուլտետի առավելություններն ու թերությունները: Նրա համար հատկապես մտահոգիչ էր ուսանողների դասերից բացակայությունները, պրակտիկաների արդյունավետ կազմակերպման խնդիրը, ինչպես նաև մարզասրահների, լոգարանի վերանորոգումը: Վ. Գրիգորյանը բարձր գնահատեց ֆակուլտետի որակյալ մասնագետներով զինվածությունը, որը նպաստավոր հիմք է՝ ֆակուլտետի գործառույթների իրականացման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի ղեկանի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 41 անդամներ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարց:

4.1.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի «Գիտական տեղեկագիր» հանդեսի 2013 թ. երկրորդ համարի Ա և Բ պրակները հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել հրատարակության «Գիտական տեղեկագիր» հանդեսի 2013 թ. երկրորդ համարի Ա և Բ պրակները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 41 անդամներ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան